Ալեքսանդր Ծատուրյան

Կարոտանք

Մտքի ծով ընկած՝ ծովի ափերին
Լուռ թափառում եմ, որպես ուրվական.
Վարդ-լուսաբացին թե խոր գիշերին
Երկինքն է թախծիս անմռունչ վրկան...

Թախծում եմ, ընկե՛ր, ու քեզ փափագում
Գեղուն վայրերի կապույտ երկնի տակ.
Այս ճոխ բընության թավածիլ գրրկում
Միայն դո՛ւ չրկաս, ա՛յ իմ հրրեշտակ:

Խաղուն առվակի կարկաչն եմ լրսում,
Թե ականջ դրնում բրլբուլին հովտում
Ձայնի՞կդ է անուշ հոգիս երազում,
Անո՞ւշ լեզվիդ եմ էրված կարոտում...

Ա՜խ, ո՞ւր ես, թև ա՛ռ, թրռի՜ր, իմ թրռչնա՛կ,
Շողա՛ գեթ վայրկյան, որպես լույս-երազ,
Իմ կարոտ աչքին... Այս շող-երկնի տակ
Միայն քո շողուն պատկերն է պակա՜ս...